8796

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«06» 08 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 200 - 25

Նախաձեռնող՝ *«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ*
Լոռու մարզ, Սպիտակ, Շիրակի փ., խճուղի 144

Գործունեությունը՝ *Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի Շիրակի խճուղի 144 հասցեում 3 թռչնանոցի կառուցմամբ գործունեության ընդլայնում*
Լոռու մարզ

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 200 - 25

«06» 08 **2025թ.**

Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի Շիրակի խճուղի 144 հասցեում նախատեսվող 3 թռչնանոցի կառուցմամբ գործունեության ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Սպիտակ բնակավայր

Ներածական մաս. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊ ընկերությունը նախատեսում է կառուցել 3 թռչնանոց՝ ընդլայնելով ընկերության արտադրական գործունեությունը: Թռչնանոցները նախատեսվում են կառուցել արդեն իսկ գործող ընկերության տարածքում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 13-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Նախատեսվող թռչնանոցների կառուցումն իրականացվելու է Լոռու մարզի Սպիտակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասում, որը սեփականության վկայականով պատկանում է «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊ ընկերությունը՝ N 25052020-06-0048: Սպիտակ համայնքի ղեկավարի կողմից տրամադրվել է նախագծման թույլտվություն N 40 /տրված՝ 25.06.2024թ./՝ գործունեության ընդլայնման համար:

Նախատեսվող գործունեության հողատարածքից ամենամոտ բնակելի տունը 177 մետր հեռավորության վրա է գտնվում, իսկ M7 ավտոմայրուղին՝ 316 մետր:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի Շիրակի խճուղի 144 հասցեում, որտեղ գործում են 12 թռչնանոցներ և իրականացվում է թռչնամսի արտադրություն: «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊ ընկերությունն իր արտադրական

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

հզորությունը բարձրացնելու նպատակով նախատեսում է կառուցել ևս 3 թռչնանոց՝ տարեկան միջին արտադրողականությունը հասցնելով մինչև 300000 գլուխ թռչուն: Նախատեսվում է տարեկան արտադրել մինչև 4,500 տոննա թռչնամիս:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացում ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ, Օրենքով սահմանված կարգով, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժիններից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Ստացված կարծիքներն ամփոփվել են, որոնց ավելացվել են նաև մասնագետի դիտողություններ ու առաջարկությունները և հաշվետվությունն ուղղարկվել է «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին լրամշակման:

Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել են հանրային լսումներ Սպիտակ և Արևաշող ազդակիր բնակավայրերում: Հանրային լսումների ընթացքում բարձրաձայնվել են մի շարք հարցեր՝ կապված սանիտարապաշտպանիչ գոտու չափի ապահովման, բնակելի տարածքում առկա գարշահոտության, թռչնաբուծարանի առանձնյակների և բրոյլերների թվաքանակի վերաբերյալ, որով պայմանավորված է սանիտարապաշտպանիչ գոտու չափը: Հարկ է նշել, որ թռչնաբուծարանի առանձնյակների և բրոյլերների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը փորձաքնության ընթացքում հստակ ներկայացված չի եղել:

Ազդակիր բնակավայրերի բնակիչները նշել են, որ ընկերության գործունեությունը շատ կարևոր է համայնքի համար, քանի որ հիմնական աշխատատեղեր է ապահովում համայնքի համար, ինչպես նաև աջակցում է համայնքում իրականացվող սոցիալական ծրագրերին: Կարևորելով աշխատատեղերի ստեղծման փաստը՝ Արևաշող բնակավայրի բնակիչները փաստել են, որ տարածքում առկա է ֆոնային գարշահոտություն, որը տարվա շոգ եղանակին ավելի արտահայտիչ է դառնում:

Ընկերությունը պատրաստակամություն է հայտնել ձեռնարկել մի շարք միջոցառումներ՝ նվազեցնելու բացասական ազդեցությունները բնակավայրերի վրա, որի համար նախատեսել է երկշերտ ծառատունկի իրականացում հողամասի հարակից տարածքում, հատուկ նյութերի կիրառում և բիոգազի արտադրություն՝ գարշահոտությունը նվազեցնելու համար: Նշված միջոցառումների ապահովման վերաբերյալ ՇՄՆ գրություն է ներկայացվել ընկերության կողմից: Հարկ է նշել, որ ամենամոտ բնակելի տունն ընդլայնվող արտադրական տարածքից գտնվում է 177 մետր հեռավորության վրա, իսկ սանիտարապաշտպանիչ գոտու չափը՝ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով սահմանված, հնարավոր չէ ապահովել ընդլայնման գործունեության արդունքում:

Սանիտարապաշտպանիչ գոտու խախտման արդյունքում բնակավայրերում կարող է լրացուցիչ ավելանալ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները՝ ներառյալ գարշահոտությունը: Հարկ է նշել, որ նախատեսվող մեղմացնող միջոցառումները

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

նախապես չեն ներկայացվել հաշվետվության մեջ և հաշվարկներով չի հիմնավորվել այդ միջոցառումների իրականացման արդյունքում սանիտարապաշտպանիչ գոտու սահմանված չափի հնարավոր կրճատումը՝ ինչը սահմանված է վերոնշյալ հրամանով:

Պետական փորձաքննական եզրակացությունը կազմվել է հիմք՝ ընդունելով հետևյալ փորձաքննական հիմնավորումները.

1. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող երեք թռչնանոցների կառուցման միջոցով արտադրության ընդլայնման արդյունքում չի ապահովվում քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով սահմանված սանիտարապաշտպանիչ գոտու չափը:
2. Հաշվետվության մեջ չեն գնահատվել ազդակիր՝ Արևաշող բնակավայրի վրա նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունները, չեն ներկայացվել տարածքում գարշահոտության լրացուցիչ ավելացման վերաբերյալ տեղեկատվություն, դրա մեղմման կամ վերացմանն ուղղված համապատասխան միջոցառումները և հիմնավորումները, ինչպես նաև թռչաբուծարանի առանձնյակների և բրոյլերների քանակական հստակ ցուցանիշները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները և ղեկավարվելով Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ և նույն Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի Շիրակի խճուղի 144 հասցեում նախատեսվող 3 թռչնանոցի կառուցմամբ գործունեության ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան